

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

SOMMAIRE

PAGE

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	129
ՏԵՐ-ՂԱԶԱՐԻԱՆ Հ. Ե. — Նահատակներու տարին	1
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
ԱՆԱՆԻԱՆ Հ. ՊՕՂՈՍ. — Յովհաննէս Գորեպիսկոպոսի երկու գառերը	14
ԲԻԻՐՏԵԱՆ Յ. — Վասիլ Մարաջախտի ժամանակագրութիւնը	51
ԳՐԱԿԱՆ	
ԲԻՊԱՐԵԱՆ Հ. Կ. — Բնագանցական իրականութիւնը Նաբեկի մէջ	4
ԹՈՐՈՍԻԱՆ Հ. Յ. — Տանքէ եւ իր գործը (Շար.)	38
ԳԱՐՏԱՇԵԱՆ ԱՐՏԱՇԵՍ. — Ակնայ անտունի	68
ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ	
ԱՆՏՈՆԵԱՆ Հ. ՌԱՓԱԷԼ. — Քննական փորձ մը ներկայ գոյութեամբ աշտ իմաստասիրական շարժումին շուրջ (Շար. եւ վերջ)	29
Ս. ԳՐԱՅԻՆ	
ԶՐԱՔԵԱՆ Հ. ՔԵՐՈՐԵՆ. — Առաքելները ի՞նչ կարգով բազմած էին վերջին ընթրիքին	44
ՊԱՏՄԱԿԱՆ	
ERNETTI P. M. (O. S. B.). — Երանդեան եւ Յայտնութեան տօներուն քուականները (Հայացուց Հ. Արսէն Աղամեան)	49
ԳԵՈՐԳԵԱՆ ԳԱՌՆԵԿ. — Ճշտումներ Զննուշի մասին	56
ԳԵՂԱՐՈՒԵՍ	
ՏԵՐ-ՂԱԶԱՐԻԱՆ Հ. Ե. — Նկարիչ Լեւոն Ազնաւուրեան	81
ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ	
ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ. — Տերեւաբափ	55
ԳԱՍՊԱՐԵԱՆ ԱՌԱՆ. — Մեռած ընկերոջ մը յիշատակին	67
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ	
ԲԻԻՐՏԵԱՆ Յ. — «Յուցակ Հայերէն Զեռագրաց Ս. Նշանի վանուց ի Սեբաստիա», Թորգոմ Արքեպիս. Գուշակեանի	69
— — «Էջմիածին» պատկերագիրք	70
ՏԵՐ-ՂԱԶԱՐԻԱՆ Հ. Ե. — «Յուշամատեն մեծ եղեռնի», Գեքսամ Ահարոնեանի	70
— — «Կասանդրա», Արամ Երեմեանի	71
— — «Արեւելահայ Գրականութիւն», Ս. Սիմոնեանի	72
ԱԶԳԱՅԻՆ ԱՐԶԱԳԱՆԳ	
Հ. — Հ. Յովհաննէս վրդ. Մըսրէրեանի մահուան առիթով	74
Մ. — Հայկ Անէմեան (Մահուան տխուր առիթով)	78
* * * Համաստեղի Գրական Գործունէութեան Յիսնամեակը (Կոչ՝ Յարեղիմեան Յանգաճախումքի)	80

ARTICLE DE FOND	
DER-GHAZARIAN P. E. — L'année des Martyrs	1
PHILOLOGIE	
ANANIAN P. PAUL. — Deux sermons de Jean le Chorévêque	14
KURDIAN H. — La chronologie du Maréchal Basile	51
LITTERATURE	
KIBARIAN P. C. — La réalité ontologique dans Narek	4
THOROSSIAN P. J. — Dante et son oeuvre (Suite)	38
KARDACHIAN ARD. — Chanson populaire de Akn	68
PHILOSOPHIE	
ANDONIAN P. RAPHAEL. — Etude critique sur le mouvement philosophique existentialiste actuel (Suite et fin)	29
BIBLIQUE	
TCHERAKIAN P. CHERUBIN. — Le rang des apôtres autour de la table de la Dernière Cène	44
HISTOIRE	
ERNETTI P. M. (O. S. B.). — Les dates des fêtes de l'Épiphanie et de la Nativité de J. C. (Tr. par P. Arsène Atamian)	49
KEVORKIAN GARNIK. — Pour l'histoire de Tchenkouche	65
BEAUX ARTS	
DER-GHAZARIAN P. E. — Le peintre Léon Aznavourian	61
POESIES	
ARSEN YERGATH. — Effeuillement	55
KASPARIAN ARAN. — A la mémoire d'un compagnon mort	67
RECENSIONS	
KURDIAN H. — «Catalogue des Manuscrits du monastère St. Nichan à Sébaste», de T. Arch. Gouchakian	69
— — «Etchmiadzine» album	70
DER-GHAZARIAN P. E. — «Livre du grand crime», de Ghersam Aharonian	70
— — «Cassandra», d'Aram Yérémiian	71
— — «Littérature arménienne orientale», de S. Simonian	72
ECHO ARMENIEN	
P. — P. Jean Mecorian	74
M. — Mr. Hayk Adjémian	78
* * * Le cinquantième anniversaire de l'activité littéraire de Hamasdegh	80



1843 - 1966
ՃԻՊ. ՏԱՐԻ
ԹԻԻ 1 - 3
ՅՈՒՆՈՒՄ - ՄԱՐՏ

ԲԱԶՄԱՎԵԲ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԻՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXXIV^o année, 1966, N. 1 - 3 Janvier - Mars

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՏԱՐԻՆ

Յետադարձ ակնարկ մը նետելով անցեալ տարուան վրայ, հետեւեալ խորհրդածութիւնները կը ներկայանան մեր առջեւ:

Ժամանակակից հայ միապաղաղ պատմութեան մէջ բացառիկ էջ մը պիտի մընայ 1965ը, զոր կարելի է «Նահատակներու տարին» կոչել:

Եւ արդարեւ Ապրիլեան Եղեռնի յիշատակը՝ փոթորիկի մը նման, եկաւ անցաւ Հայրենիքէն սկսեալ՝ արտասահմանի բոլոր հայ զաւուրներու վրայէն, վերարժարեալով հաստ մոխիր կապած հայրենասիրութեան կրակը, օտարութեան խորշակին ներքեւ թառամող սրտերու մէջ:

Մեծ հրճուանքով է որ ականատես եղանք, թէ ինչպէս, իր ազգային դիմագիծը կորսնցնող նոր սերունդը մանաւանդ, յանկարծ ցնցուեցաւ, արթնցաւ իր թմբիկէն եւ իր հայրերէն տարրեր ակնոց գործածելով, տարրեր մտածելակերպ ու նենալով հանդերձ, աննախընթաց խանդավառութիւն եւ հետաքրքրութիւն ցոյց տուաւ Հայ Դատին հանդէպ:

Մեզի համար ուրախութեան ուրիշ ակնարկներ մը եղաւ նաեւ այն միասնակամութեան ոգին, զոր ցոյց տուին տարիներով իրարու հակընդդէմ գաղափարական ծառայող, իրարու խորթ մտայնութիւն ունեցող հաստեմաներ: Աշխարհացրիւ հայեր, պահ մը մոռնալով ամէն հաշիւ եւ անձնական շահ, ձեռք ձեռքի տուին եւ համազգային շուքով տօնախմբեցին մէկուկէս միլիոն Նահատակներու խնկելի յիշատակը: Այս անհաւատարմութեան միասնակամութիւնը «Նահատակներու հրաշք»ը կարելի է նկատել:

Որպէսզի վայրկեանական բոց մը եղած չըլլայ Նահատակներու 50ամեակին առիթով ստեղծուած ոգեւորութիւնը, ինչ ինչ զաւուրներու մէջ, կազմուեցան մնայուն յանձնախումբեր, մասնակց ու թեւ մը ջարդ չտեսած տարրերու, որոնք գործնական քայլերով գործի լծուած են, մղուած ու թէ ցեղային ոխի եւ վրէժխնդրական զգացումներէն, այլ միայն արդար դատ մը շահելու հեռանկարէն, դարու մը մէջ, երբ ամէնէն յետամնաց ցեղերն իսկ կը տիրանան իրենց անկախութեան:

Նշելի կէտ մըն է նաեւ, որ միջազգային

յին մամուլը եւս արձագանգ տուաւ հայկական հարցին:

Մեծ Եղեռնի յիսնամեակը առիթ ստեղծեց նաեւ, որ Հայ Գրականութիւնն ու Արուեստը հարստանայ նոր ստեղծագործութիւններով:

Հոս կարելի է չիշատակել, Պէյրութի Թէքէեան Մշակութային Միութեան կազմակերպած դրական եւ գեղարուեստական մրցումները, որոնց արդիւնքը եղաւ մեծապէս գոհացուցիչ:

Հայ մամուլը՝ օրաթերթերը եւ թերթերը, գիտակից իրենց կոչումին, շահեկան գրութիւններով, խնամուած «Բացառիկ» թիւերով եւ այլ հրատարակութիւններով, գովելի կերպով կատարեցին իրենց պարտականութիւնը եւ մեծապէս սատարեցին այն խանդավառութեան, զոր Սփիւռքը ցոյց տուաւ Նահատակներու յիսնամեայ տարեդարձի առիթով:

Թերթերէն դուրս, առանձին հատորներով, լոյս տեսան եղեռնի վերաբերեալ զանազան յուշագրութիւններ: Ընդհանուր աղէտէն հրաշքով ազատած ամէն հայ իր սրտածմելի պատմութիւնը ունի: Որքան ալ բազմաթիւ ըլլան Հայ Գողգոթային նուիրուած գիրքերը, անոնք միայն տրուար ցոլքերը կրնան հայելացնել այն ահաւոր դժոխքին, որուն մէջ հնադարեան, տաղանդաւատ եւ ազնիւ ժողովուրդ մը պիտի մոխրանար:

Չարդերու մասին հրատարակուած երկերէն զատ, 1965ի ընթացքին լոյս տեսան նաեւ գրական արժէքաւոր գործեր, որոնք լուսեղէն էջեր կ'աւելցնեն արդէն հայ գրականութեան վրայ:

Հոս՝ մեր նպատակէն դուրս կ'իյնայ թուել մի առ մի այդ հատորները եւ անդրադառնալ անոնցմէ իւրաքանչիւրին վրայ:

Ինչ որ սակայն ընդհանուր ակնարկով կարելի է ըսել, բազմաթիւ նախորդ տարիներու, ճոխ է 1965ի գրական հունձքը, թէ՛ Սովետական Հայաստանի եւ թէ՛ արտասահմանի մէջ:

Միութեան կ'է տեսնել՝ թէ օրէ օր կ'ամրապնդուի Մայր Հայրենիքի եւ ար-

տերկրի հայութեան զօգը, երկուստեք իրարու հանդէպ ցոյց տրուած հետաքրքրութեամբ:

Վերջերս, Սովետական Հայաստանի մէջ, կազմուեցաւ «Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէ»-ն, աւելի մօտէն հետեւելու համար զաղթաշխարհի հայութեան:

Այլազան բովանդակութեամբ զանազան հրատարակութիւններ եւ թերթեր կը հասնին արտասահման, որոնց կարգին՝ 1965ի ընթացքին, նոր լոյս տեսած «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթը: Այդ թերթերը եւ գիրքերը, հակառակ մեղի համար իրենց խորթ ուղղագրութեան, կենսահաղորդ երակներ պէտք է ըլլան, բերելով մեղի Հայաստանի աւելնը եւ աւելը, հայրենի թարմ շունչով կազդուրելու համար օտար աստղերու տակ գունատուող հայութիւնը:

Հայրենիքէն հասնող թերթերու եւ երկերու մէջ լոյս տեսնող անթիւ քերթումները, գլղացող առուակներու նըման, թէեւ քիչ մը միօրինակ ու միալար երգեր են, բայց բնաշխարհի ջինջ երկինքին ցոլքը եւ արեւին բոցը ունին իրենց մէջ: Այդ առուակներէն ոմանք, ապագային կրնան յորդահոսան գետերու վերածուիլ եւ հարստացնել հայ գրականութեան ծովը:

Այս փոքր բանաստեղծներու համանրուակին առնթեր, մերթ կը լսենք, մրրիկի պէս հզօր երգը Պարոյր Սեւակի, Յովհաննէս Ծիրազի նման մեծ քերթողներու, որոնք Չարենցի ուղիէն կը ձգտին քալել:

Բանաստեղծութենէն աւելի՝ վէպի եւ պատմուածքներու կալուածին մէջ է, որ զգալի նուաճումներ կը կատարուին Մայր Հողին վրայ:

Հայաստանէն անցնելով արտասահման, բոլորովին տարբեր՝ երբեմն անբաղձալի պայմաններու մէջ, հայ գրողները կը տեսնենք պատնէշի վրայ:

Սփիւռքի 1965ի գրական վաստակը բացառիկ կերպով բեղուն եւ հարուստ եղաւ: Ուրախայի է հաստատել, թէ 1965ի ընթացքին լոյս տեսած ճոխ բովանդակու-

թեամբ ստեղծագործութիւններու մէջ կան մէկէ աւելի յաջող եւ մնայուն գործեր:

Հակառակ՝ անուններ չտալու մեր առաջադրանքին, հոս կ'արժէ յիշել գրական կշիռ ունեցող գործերէն ոմանք. այսպէս՝ Վահրամ Մամեանի «Հայու բեկորներ» պատմուածքներու հատորը, Գառնիկ Ադգարեանի ապրումով եւ պոթկումով երգուած «Մատեան ցաւի եւ հատուցման» քերթողագիրքը, Գաբրիէլ Թադևոսեանի «Պայքարը բոցավառած հողիներու» պատմուածքները, Սիմոն Սիմոնեանի «Կը խնդրուի... խաչածեւել» ինքնատիպ երկը, եւ այլն:

Իրենց շահեկանութեան համար կ'արժէ յիշատակել նաեւ Կարոյ Գեորգեանի «Ամէնուն Տարեգիրքը», Ս. Սիմոնեանի «Արեւելահայ Գրականութիւն»ը, Եղիշէ Յ. Մելիքեանի «Հարք-Խնուս» պատկառելի հատորը, «Չարթօնք» օրաթերթի հրատարակած «Յուշամատեան Մեծ Եղեռնի» հաստատիւր գիրքը, եւ այլն:

Արժէքաւոր գիրքերու շարքին կարելի էր թուել նաեւ Չարեհ Որբունիի «Եւ ե-

ղեւ մարդ» վէպը, Չարեհ Որբունիի «Քար կաթիլներ» ու «Ես եւ ուրիշներ» քերթումներու հատորները, Ժազ Յակոբեանի «Ջահերթ»ը, Ռուբէն Գազան՝ ճեանի «Կեանքը – Գոյրս» թարմ շունչով երգուած քերթողագիրքը, ինչպէս նաեւ Տոթթ. Համբարձում Գէլիկեանի «Բժիշկ մը եւ Արդի Գրականութիւն»ը, եւ այլն:

Այս վերջինները, սակայն, կը պատկանին 1964ի տարեշրջանին:

Վերոյիշեալ հատորներէն զատ կան անշուշտ ուրիշ գործեր ալ, որոնց մէջէն կ'արտափայլին տաղանդի ցոլքեր:

1965 թուականը Հայութեան համար եղաւ միութարական եւ յուսատու տարի մը: Լաւատես զգացումներով կ'ողջունենք 1966 տարեշրջանը:

1965 թուականը անկիւնադարձ մըն է է հայ արդի պատմութեան մէջ: Առաջիկայ տարիները թող ըլլան նորանոր նուաճումներու տարիներ: Ազգովին, միասիրտ եւ միակամ, յաջողելու յամառ ճիգերով քալենք դէպի վերջնական յաղթանակ:

Հ. Ե. ՏԵՐ ԴԱԶԱՐԵԱՆ

